

ՀԵՆՐԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԳԱՅԱՆՅԱՆ ԴՊՐՈՅԻ
ԵՐԱԽՏԱԿԱՆՈՐԸ

(Հովսեփ ավագ Բահանա Մեկյանցը (1835-1910) և Երևանի թեմական ու
Գալանյան դպրոցները)

1836 թվականի Կանոնադրության (ՊՈՆՈՓՆԻՆ) համաձայն, որն ընդգրկում էր նաև Լուսավորչական Եկեղեցու գործերի կառավարումն ու հսկողությունը, նախատեսվում էր նաև Եկեղեցյաներին կից ծխական և թեմական դպրոցների ստեղծումը: Թեև այս փաստաթղթերով Հայաստանին գործելու որոշ իրավունքներ էր տրվում և առաջին հայացքից թվում էր առաջադեմ որոշում, սակայն իրականում սահմանափակում էր Հայ Եկեղեցու, ժողովրդի իրավունքներն ու արտոնությունները՝ ազգային կրթության, լուսավորության զարգացման և Եկեղեցու գործունեության բնագավառներում:

«Պոլոժենիե»-ի ընձեռած հնարավորությամբ 1837 թ. Երևանում սկսում է գործել թեմական դպրոցը, որին թույլատրվում է միայն պատրաստել թեմերի համար հոգևորականներ: Ուսման ծրագիրը սահմանափակված էր մի Լանի առարկաներով՝ կրոն, հայոց լեզու, թվաբանություն, կրոնի պատմություն և այլն: Մակարդակը տարրական էր: Նման վիճակը չէր կարող բավարարել կրթությանը ներկայացվող պահանջները:

Միաժամանակ 1850-ականներին փակվեցին մի շարք դպրոցներ, այդ թվում նաև՝ Երևանի թեմական դպրոցը: Մեծ ջանքերի շնորհիվ, սակայն, հոգևոր իշխանությունը և օրվա Կաթողիկոսը կարողացան հասնել փակված դպրոցների վերաբացմանը, որոշ հայեր արվեցին դպրոցները լավագույն ուսուցիչներով ապահովելու ուղղությամբ:

Երևանի թեմական դպրոցի վերաբացումը հանձնարարվում է 21-ամյա երիտասարդ Հովսեփ Հարությունի Մեկյանցին:

Նա ծնվել է 1835-ի մայիսի 1-ին Պոլոսֆիլիսա գյուղում, Հարություն խաչակիր Բահանայի ընտանիքում: Հիսնական թվականներին, ետ մահից հետո, Ներսես Ե Կաթողիկոս Աշտարակեցին նրան վերցնում է իր մոտ որսիս հոգեզավակ և ուղարկում Մայր Աթոռի ժառանգավորաց դպրոց՝ սովորելու: 1858 թ. այն հաջող ավարտելուց հետո, 21-ամյա Մեկյանցը վեհափառի նրախանով կարգվում է Երևանի Ս. Պողոս-Պետրոս Եկեղեցու դպիր, միևնույն ժամանակ ձեռնադրվում Բահանա, իսկ գործակալի կողմից այդ նույն նրախանով նրան է հանձնարարվում Երևանի թեմական դպրոցի վերաբացման և ուսումնական աշխատանքների կազմակերպման գործը: Մեկյանցը մեծ եռանդով սկսում է այդ աշխատանքը և համառ ջանքերից հետո հասնում հաջողության: Բացում է դպրոցը, հավաքում համապատասխան թվով աշակերտներ և սկսում դասերը: Դպրոցի աշխատանքները ղեկավարում է մինչև 1857 թվականը: Թեև այդ տարի տնօրինությունն անցնում է փոխանորդ Ստեփան վարդապետին, սակայն Հովսեփ Մեկյանցը չի կտրվում դպրոցից և հինգ տարի շարունակ ավանդում է կրոնի ու հայոց լեզվի դասերը՝ զուգահեռ կատարելով նաև դպրոցի տեսչության պաշտոնը և հոգեբարձությունը: Երկու տարի անց դպրոցի կառավարիչ է նշանակվում Գրիգոր վարդապետ

Աղափիրյանը: Նա ևս Մելյանցին թողնում է իր պարտականությունների կատարման մեջ՝ դպրոցի ղեկավարումը վերցնելով իր ձեռքը. չնայած որ տեղի հայրը դասավանդում էր Գայանյան դպրոցում նույն առարկաները՝ ղեկուս նրա բացման օրից սկսած:

Այս տարիներին Երևանի բարձրաշխարհիկ հայ հասարակությունում ուսուցիչի նման, բարեկիրթ, լուսավորված և լավագույն վարվելաձև ունեցող դուստրեր դաստիարակելու պահանջը հրամայական է դառնում. և ժամանակի թելադրանքն էր նաև օրիորդաց մի դպրոց ունենալը:

Հետագայում, այս կապակցությամբ, Մելյանցը հասարակությանը ներկայացրած իր «Համառոտ հաշիվ» գրության մեջ ասում է. «1866 թվին պարոնայք Ռուբեն Հասան Ջալալյանց, Հովհաննես Ղորղոնյան, Վասիլ Եղիազարյան, Կառլ Երիզնեբերգ միասին խորհրդակցելով որոշեցինք աշխատել մեր բազմաթիվ մի օրիորդաց դպրոց բանալ: Դիմում ենք թուլյատվություն խնդրելու Հոգևոր Իշխանություններից, որը և ստանում ենք: Մի քանի ժամանակ թեմական դպրանոցից ստացած մեր ռոնիկներից մի մասը տալիս ենք նոր դպրոցի կարևոր պարագաներ գնելուն: Վերջապես ապրիլի 13-ին բաց ենք անում Գայանյան ուսումնարանը. բաժանում ենք մեր մեջ դասավանդելի առարկաները, ինձ ընկնում է կրոն և հայոց լեզվի դասերը: Ամենքս էլ ձրի ենք դասախոսում մինչև 1868 թիվը: Դպրոցի կառավարիչ ընտրվում է պարոն Ռուբեն Հասան Ջալալյանցը, որը գրեթե հիմնադիրը և բարեխարն էր դպրոցի» («Արարատ», 1882 թ., էջ 443), իսկ դպրոցի տեսչությունը 1868-ից մինչև 1872 թվականը կատարում է տիկին Սոնա Մադաթյանը:

Գայանյան օրիորդաց դպրոցի հիմնումը Երևանում մի մեծ իրադարձություն էր հայ իրականության մեջ: Երևանում առաջին անգամ հայ աղջիկը պետք է սովորեր իր ազգային դպրոցում, այն էլ՝ օրիորդաց դպրոցում և մայրենի լեզվով:

Բարվոժ վիճակում չէին նաև թեմական դպրոցի գործերը: 1872-ին այստեղ տեսուչ է նշանակվում Տ. Խորեն վարդապետ Ստեփանեն՝ փորձառու մանկավարժը: Նա դպրոցի գործերը կարգավորելու նպատակով լր մտտ է հրավիրում Մելյանցին: Նրանք միասին դպրոցի համար գումար են հանգանակում՝ ձեռք բերելով 7500 ռուբլի: Ցավոք, 1873 թվականին, Խորեն վարդապետի տեղափոխվելուց հետո, Գայանյան դպրոցը կրկին անուշադրության է մատնվում: Այդ ժամանակ, Երևանի փոխանորդ Եղիազար արքեպիսկոպոսի որոշմամբ, բազմաթիվ երիտասարդներից Վասիլ Եղիազարյանցը, կարապետ Ջալալյանցը, Հայկ Տեր-Ամբակումյանցը և Տրդատ Վարդանյանցը Մելյանցին ընտրում են դպրոցի կառավարիչ, իսկ Տրդատ Վարդանյանցին՝ գանձապահ: Մելյանցին հանձնարարում են կրոն, հայոց լեզու և պատմություն առարկաների դասավանդումը: Առարկաները բաշխելով միմյանց միջև, սկսում են անվճար դասավանդել, սակայն մեկ տարուց հետո բոլորն էլ հեռանում են, և հարցականի տակ է դրվում դպրոցի հետագա գոյությունը:

Այս տագնապալի վիճակից դպրոցը դուրս բերելու ակնկալիքով, նա տեղի հայ հասարակությանը հրավիրում է ժողովի, որտեղ նրանց է ներկայացնում ստեղծված աննախանձելի իրավիճակը, բացատրում, հորդորում և կոչ է անում՝ նախաձեռնել հրատապ անհրաժեշտ միջոցներ: Ժողովուրդը համապատասխան վերաբերմունք է դրսևորում, և այստեղ էլ անմիջապես ընտրում են հոգաբարձուհիներ (հոգաբարձուհիներն այստեղ պետք է լինեին միայն կանայք), իսկ Մելյանցին՝ դպրոցի տեսուչ: Այս որոշումը հունիսին հաստատվում է Գևորգ Գ Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից: Ակզբնապես դպրոցը տեղավորված էր Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու նեղ, խոնավ, հողածածկ ետակով մասնավոր մի սենյակում, մի

սեղանով, մի քանի խարխուլ նստարաններով, 23-24 աշակերտներով և 72 ուսուցիչ 19 կոպեկ պարտով: Ան այն ամենը, ինչ ունեցել է դպրոցը:

1874 թվականի ուսումնական տարին մոտենալու կապակցությամբ, հոգաբարձության հետ միասին, Մելյանցը պաշտոնական թղթով դիմում է Առաջնորդական Փոխանորդին՝ խնդրանքով, որ նա համազի թեմական տեսուչ Գևորգ Տեր-Հարությունյանցին, որպեսզի վերջինս գա, և միասին կարգավորեն դպրոցի գործերը, սակայն թեմական տեսուչը, իմանալով դպրոցի աղքատ ու ծանր վիճակի մասին, մերժում է՝ ասելով. «Նս գոյակ չունեն, որ դպրոցի վարժապետները զլխիցս վերցնեն»: Մելյանցը հարկադրված էր կրկին դիմելու Փոխանորդին՝ խնդրելով թույլ տալ մասնավոր ռոնիկով ուսուցիչներ վերցնել: Խնդրանքը բավարարվում է, և կարևոր առարկաների գծով մի քանի ուսուցիչներ համաձայնվում են 5-ից 10 ուսուցիչ դասավանդել:

Գյրոցի աշակերտներն այդ ժամանակ երեսուներեքն էին: Գյրոցն սկսում է բարգավաճել, ինչը չի ուրախացնում տեղի քաղցիններին, որոնք տարածում են տարբեր լուրեր՝ խանգարելով դպրոցի գործունեությանը: Հարցը պարզելու նպատակով, Գևորգ Դ Կաթողիկոսը Այնտղի անդամներից հատուկ էնջի է նշանակում, որի շնորհիվ ամեն ինչ բացահայտվում է, և մեղավորները ներողություն են խնդրում: Նման երևույթներին իսպառ վերջ դնելու նպատակով 1875 թ. Կաթողիկոսը հատուկ կոնդակով Մելյանցին է հանձնում դպրոցի ողջ տնտեսական, ուսումնական ղեկավարությունը և հովանավորությունը: Մինչ այդ, արդեն 1874 թ. հունիսի 1-ից մինչև դեկտեմբերի վերջը, դպրոցն ուներ երկու ուսուցիչ, 43 աշակերտուհի: Քանի որ դպրոցը ծխական էր, ուստի դասավանդվող առարկաները սահմանափակվում էին միայն հայոց և ռուսաց լեզուների, թվարանության, երաժշտության, վայելչագրության և ձեռագործի առարկաներով, իսկ դպրոցի դրամական մուտքն արդեն կազմում էր 460 ուսուցիչ:

Հանրության աջակցությամբ աստիճանաբար քարելավվում են դպրոցի գործերը: Սինդոքը թույլատրում է հարմարավետ դպրատուն կառուցելու համար Ա. Պողոս-Պետրոս եկեղեցու եկամտից այդ նպատակներին հատկացնել 500 ուսուցիչ ևս, սակայն այդ հոգսն իր վրա է վերցնում Երևանի հարուստներից մեկը՝ Ղևոնդ Ղազարյանը, և, ի հիշատակ մահացած որդու, կառուցում դպրոցի շենքը և ավարտում շինարարությունը 1877-ի սեպտեմբերին: Այսպիսով, Երևանի Գայանյան դպրոցը ձեռք է բերում մի նորաշեն, մաքուր, հարմարավետ դպրատուն:

Մելյանցը դիմում է ժողովրդին՝ այդ նպատակի համար նվիրատվություններ կատարելու: Արդյունքում հավաքվում է 1034 ուսուցիչ գումար, շնորհիվ որի դասարանների թիվն ավելանում է ևս մեկով, իսկ աշակերտուհիների թիվը հասնում է 85-ի: Եկամուտներն ավելացնելու նպատակով կազմակերպվում են նաև աշակերտներն ձեռքի աշխատանքների վաճառք և թատերական ներկայացումներ: Ստացվում են կտակած գումարներ, որոնք կազմում են 4874 ուսուցիչ 60 կոպեկ, այդ ընթացքում դպրոցի ծախսը կազմում է 3385 ուսուցիչ, գուտ եկամուտ է մնում 989 ուսուցիչ:

Շուտով Գայանյան ուսումնարանը ձեռք է բերում մի կարևոր հաջողություն ևս, տարրական դպրոցը Սինդոքի հրամանով վերածվում է միջնակարգի (9 տարի), իսկ 1880-ին դասարանների թիվն ավելանում է ևս մեկով:

Ասեմք, որ, քացի Գայանյան դպրոցից, Հովսեփ Մելյանցը մեծ աշխատանք էր տանում իր ձեռնարկով՝ Պողոսիկիսա կոչվող գյուղում ուսումնարանի կիմնադրման համար: Այդ օրերին Ղազարի գավառի հայկական գյուղերում կային միայն երկու դպրոց:

Դժվարություններով հանդերձ, Գայանյան դպրոցը շարունակում էր վերելք ապրել, և 1881 թ. սովորողների թիվը 125 էր: Ավելացել էին Գաև առարկաները՝ հայոց և ընդհանուր պատմություն, բնագիտություն, աշխարհագրություն, հայկական ծայնագրություն և պար:

Կատարելագործվել էին դասավանդման մեթոդները, ինչի շնորհիվ բարձրացել էր աշակերտուհիների առաջադիմությունը: Շարունակվում էին ստացվել նոր գումարներ, այդ թվում՝ 1500 ռուբլի սպահանցի Հովսեփի կտակից և այլն:

Դպրոցի հաջողությունները միշտ գրգռում էին Որա հակառակորդներին, ովքեր ճնշում էին գործադրում Մեյլանցի վրա: Վերջինս դրա հետևանքով հարկադրված էր մի Բանի անգամ հրաժարական տալ, բայց ամեն անգամ ստանում էր Կաթողիկոսի հովանավորությունը և մամուլի աջակցությունը: «Դա ամենամեծ վարձատրությունն էր ինձ համար, որ ուժ ու գորություն էր տալիս»,- հետագայում նշում է Մեյլանցը: Ահա թե ինչ է գրում «Պսակը» իր 1880-ի ապրիլի 5-ի առաջաբանում՝ ի պաշտպանություն Մեյլանցի. «Նորան աշակից են հղել շատերը, նորա հետ սկսել են գործել մեր երիտասարդների մեծ մասը, բայց բոլորը, հանդիպելով արգելիների, շատերը մինչև անգամ չնչին արգելիների, վերջը վիատվել, թողել-գնացել են: Իսկ տեր հայրը, գործ դնելով հագար ու մի հմարք, մուրալով համարյա, ուսումնարանը բերել է այստեղ և այնուհետև շարունակել գործը: Պետք է խոստովանենք, որ եթե չլիներ Մեյլանցը, գործը կմնար բերի և անկատար: Նա գործեց, հանձն առնելով մեծ գոհաբերություններ, Գա ծանր ու ֆարձարտ ասպարեզի մեջ անարգ խուփեր, բազմատեսակ արգելիներ ընդունեց, զգվելի գրպարտությունների շատ շրջաններ անցկացրեց»:

Մեյլանցը քարի մաղթանքներով է հեռանում Գայանյան դպրոցից, սակայն չի հրաժարվում մանկավարժական գործունեությունից՝ մինչև կյանքի մայրամուտը դասավանդելով իր սիրած առարկաները՝ կրոն, հայոց լեզու, պատմություն:

1810 թ. «Մշակը» գրում է մահախոսական. «Հունվարի 5-ին, առաւոտյան ժամը 8-ին, Երևանում վախճանվեց 75-ամյա Հովսեփի ավագ Բահանա Մեյլանցը, որ հայ հոգևորականության դասին մեջ մի պատկառելի դեմք էր ներկայացնում:

Հանգուցյալը ծնվել է 1835-ի մայիսի 1-ին և որդեգիրն է Ներսես և Աշտարակեցու: Ամբողջ 40 տարի ուսուցիչ էր և 52 տարի Բահանա Նրևանում:

Նա էր, որ բացեց, խնամեց և առաջ տարավ Երևանի Գայանյան դպրոցը 1866 թվից ի վեր: Նա մեռավ գրեթե չֆավոր՝ ապրելով ձերությամբ հասակում Բահանայագործության արդյունքով»:

Հետագայում, 1884-ին Գայանյան դպրոցը փակվում է, 1886-ին՝ վերաբացվում որպես Երևանի իգական երկդասյան հոգևոր դպրոց: 1896 թ. այն կրկին փակվում է և վերաբացվում՝ անցնելով ուսումնական վարչության տնօրինությանը, անշուշտ դասավանդումը կատարվելով ռուսերեն լեզվով: 1905 թ. դպրոցը հանձնվում է Հայկական եկեղեցական վարչությանը: Այդ տարիներին դպրոցը երկդասյա էր: 1911-1912 ուսումնական տարում դպրոցն ուներ միջնակարգ 9 դասարան և այս կարգով գործեց մինչև 1921 թվականը, ապա միացավ Մեսրոպյան դպրոցին և դարձավ երկրորդ աստիճանի դպրոց: